ՀՏԴ 330.322.5:338.2

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄՈՏԵՑՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Կարևորվում են պետության ակտիվ միջամտության պայմաններում տնտեսական գործընթացները պայմանավորող սոցիոմշակութային միջավայրի վրա ազդող բոլոր գործոնների վերլուծությունը, տնտեսական գործընթացների վերլուծության ժամանակ իրավաքաղաքական մոտեցումը և շուկայական սկզբունքների կիրառումը: Պահպանելով մասնավոր սեփականության, անհատական ազատության և անձեռնմխելիության սկզբունքները, - պետությունը ինստիտուցիոնալ գործիքների միջոցով գլոբալ անորոշությունների պայմաններում կոչված է հասարակությանը պաշտպանել հնարավոր կառուցվածքային ու իրավական դեֆորմացիաներից:

Առանցքային բառեր. ինստիտուցիոնալիզմ, «կարգի տեսություն», տնտեսական ազատություն, մոնոպոլիա, մրցակցություն, պետական միջամտություն, սոցիալական պատասխանատվություն, կառավարվող զարգացում, ինստիտոիցիոնալ ինֆրակառուցվածք:

Սոցիալ-տնտեսական գործընթացները կառավարման և վերահսկողության առումով միշտ էլ պահանջել են նոր, արդիական մոտեցումներ ու լուծումներ: Այս իմաստով ներկայումս մեծացել է տնտեսական գիտության մեջ ինստիտուցիոնալ ուղղության նկատմամբ հետաքրքրությունը: Ժամանակակից ինստիտուցիոնալիզմը սերտ առնչություն ունի 20-րդ դարում ԱՄՆ-ում սկիզբ առած ինստիտուցիոնալ գիտական ուղղության հետ, որը փորձում էր տնտեսագիտական մտքի առջև դնել նոր խնդիրներ, տնտեսագիտության տեսությունը կապելով իրավունքի, սոցիոլոգիայի, հոգեբանության, քաղաքագիտության հետ: Ինչ խոսք, այստեղ կարևորվում են նախորդ դարասկզբին սկիզբ առած «մեծ դեպրեսիայի» հետ կապված իրադարձությունները, որոնք հիմք հանդիսացան ինստիտուցիոնալ տեսության զարգացման համար: Ստեղծվել էր այնպիսի սոցիալական իրավիճակ, որի հաղթահարումը անխուսափելիորեն ենթադրում էր ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտություն, մասնավորապես՝ խոշոր բիզնեսի նկատմամբ սոցիալական վերահսկողության հաստատում, մրցակցային միջավայրի պահպանում և սոցիալական ենթակառուցվածքի ամրապնդում: Այսինքն՝ խոսքը վերաբերում էր կառավարվող զարգացման կոնցեպցիայի մշակմանը պետության սոցիալական պատասխանատվության ակտիվ դերի պայմաններում: Այլ խոսքով, խնդիր էր դրվում ստեղծել կոորդինացված հասարակություն, որտեղ տեղի կունենար մասնավոր բիզնեսի և համազգային շահերի միավորում: Դեռևս իր ժամանակին այս գաղափարը զարգացրեց Ու.Միթչելը, նկատելով, որ մասնավոր ձեռնարկատիրության վրա հիմնված տնտեսական համակարգը կարող է պահ-

պանվել միայն մակրոմակարդակում պետության մշտական կարգավորիչ ազդեցության պայմաններում: Նրա կարծիքով, պլանավորումը «պերմանենտ ադապտացիոն գործընթաց է՝ ուղղված բոլոր տեսակի անհամապատասխանությունների և անհամամասնությունների կանխարգելմանը, հակասությունների մեղմացմանը և դրանց բռնկումների կասեցմանը» [1]: Այս առումով, տնտեսագետն առաջարկում է ստեղծել ազգային պլանավորման այնպիսի մարմին, որն օժտված կլիներ տեղեկատվական, խորհրդատվական և հանձնարարական գործունեության գործառույթներով: Գրեթե նույն գաղափարն էր պաշտպանում ամերիկյան տնտեսագետ Ջ.Կլարկը, մի կողմից՝ նշելով «սոցիալ-լիբերալ պլանավորման» համակարգի ստեղծման մասին, որը ենթադրում է մասնավոր բիզնեսի գործունեության կոորդինացման միջոցառումներ, մասնավորապես ուղղաձիգ ինտեգրման զարգացման վերահսկողություն, մյուս կողմից՝ գտնում էր, որ արտադրության կառավարման գործառույթները բոլոր դեպքերում մնում են բիզնեսի տիրույթում, իսկ պետությունը կոչված է ապահովելու անհրաժեշտ տեղեկատվական բազան և օգտագործելու տնտեսության վերահսկողության անուղղակի մեթոդները դրամավարկային ու հարկաբյուջետային գործիքակազմի միջոցով:

Սկսած 1930-ականներից՝ ինստիտուցիոնալ տեսության մեջ տնտեսական զարգացման հիմնահարցերը դառնում են առաջնային, հատկապես կառուցվածքային կտրվածքով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է արտադրության և կապիտալի համակենտրոնացման խնդիրներին, դրանց՝ մոնոպոլացման գործընթացների հետ փոխառնչություններին՝ որպես ժամանակակից տնտեսական համակարգերի հիմնական պարամետրերը պայմանավորող գլխավոր կառուցվածքաստեղծ գործոնի: Սա, ըստ էության, արդեն ազդարարում է նոր, խոշոր կորպորացիաների դարաշրջանի մասին, ընդ որում, ինչպես նկատում են ինստիտուցիոնալիստները, մրցակցությունն արդեն չի ներկայանում որպես մոնոպոլիայի հակաթեզ, այլ հանդես է գալիս որպես մոնոպոլիստական տիպի ընկերությունների գոյության ձև: Այսինքն՝ նախապատվությունը տրվում է մակրոտնտեսական մակարդակի վերլուծություններին կամ «ագրեգատային համակենտրոնացմանը»: Բնականաբար, մոնոպոլացումը ենթադրում է որոշ սոցիալ-տնտեսական հետևանքներ, որոնք ինստիտուցիոնալ տեսության մեջ միանշանակ չեն մեկնաբանվում: Որպես կառուցվածքաստեղծ գործոն՝ մոնոպոլիան ընդունակ է ծնելու երկարաժամկետ ներճյուղային ու միջճյուղային անհամամասնություններ, ամբողջ տնտեսական մեխանիզմում առաջացնելով անշրջելի փոփոխություններ: Այս իմաստով՝ այն հաճախ կարելի է ասոցացնել տնտեսական վարքագծի տիպի հետ, որը մեծ հաշվով հակասում է հասարակական շահերին: Ինչ խոսք, նման մոտեցման մեջ առկա է որոշակի հակատրեստային գաղափարախոսություն, ինչն էլ ճյուղային մակարդակում հիմք է դառնում պետական

մարմինների կողմից համակենտրոնացման աճի կարգավորման և շուկայական կառուցվածքների ապամոնոպոլացման համար: Պատահական չէ, որ արդեն 19-րդ դարի վերջերից սկսած՝ ԱՄՆ-ում դրվեցին մոնոպոլիաների գործունեությունը կարգավորող իրավական հիմքերը: Առաջին հակամենաշնորհային օրենքը՝ Շերմանի օրենքը [1890), արգելում էր ցանկացած միավորումների, համաձայնությունների, միությունների ստեղծումը, որոնք սահմանափակում էին առևտրի կամ այլ գործունեության ազատությունը: Հետագայում ԱՄՆ-ում ընդունվում են նմանատիպ շատ օրենքներ, որոնք առավել ընդգրկուն էին մեկնաբանում մոնոպոլացման գործընթացները:

Սակայն, ինչպես ցույց է տալիս ամերիկյան փորձը, հակամենաշնորհային օրենքների ձևով շուկայական կառուցվածքների և արտադրության համակենտրոնացման նկատմամբ պետական հսկողությունը այնքան էլ արդյունավետ չէր և որոշակի ազդեցություն ունեցավ միայն մոնոպոլացման դրսևորման ձևերի վրա, բայց չկանգնեցրեց մոնոպոլացման գործընթացը: Ավելին, ինտենսիվ տնտեսական ինտեգրացման պայմաններում պետական հակամենաշնորհային օրենսդրությունը նպաստում է արտասահմանյան մրցակիցների նկատմամբ ազգային ընկերությունների դիրքերի թուլացմանը:

Ժամանակակից ինստիտուցիոնալիստների շրջանում իշխում է մի մոտեցում, որն իր հիմքում ունենալով Յ.Շումպետերի արդյունավետ մրցակցության տեսությունը, մոնոպոլիան կապում է տեխնիկական առաջընթացի իրականացման, նորագույն մշակումների և մենեջմենթի առաջադեմ մեթոդների ներդրման մեխանիզմների հետ, դրանով իսկ ներառելով մասնավոր և հասարակական շահերի միասնությունը այնքանով, որքանով դրանք նույնականացվում են արտադրության ծախքերի իջեցման, թողարկվող արտադրանքի որակական բնութագրերի կատարելագործման, բարիքների շուկայի ընդլայնման հետ՝ պայմանավորված մասշտաբի հաշվին տնտեսմամբ: Ի վերջո, ինստիտուցիոնալիստները, հիմնվելով էմպիրիկ տվյալների վրա, ընդունում են կառուցվածքային բիմոդալության սկզբունքը, այսինքն՝ այն, որ բարձր համակենտրոնացված ու դիսպերս կառուցվածքները գոյակցում են կողք կողքի: Այստեղից էլ խոշոր բիզնեսի և մանր ու միջին ձեռնարկատիրության փոխազդեցության հիմնախնդրի նկատմամբ առկա ավանդական հետաքրքրությունը և պետության կողմից մանր ու միջին ձեռնարկատիրության պաշտպանությանն ուղղված ծրագրերի ներդրումը:

1980-ականների սկզբներին ինստիտուցիոնալ տեսությունը ենթարկվում է որոշ արմատական փոփոխությունների՝ կապված տեսական վերլուծությունների նոր ուղղությունների հետ, ինչի արդյունքում էլ տնտեսական գիտության և սոցիալական փիլիսոփայության մեջ դառնում է գլխավոր այլընտրանքային ուղղութ-

յուններից մեկը: Գերակա է դառնում սոցիալ-տնտեսական գործընթացների պետական կարգավորման պրակտիկայի նորացումը: Մասնավորապես, հասարակությունը ընդունվում է որպես ամբողջական բազմամակարդակ մեխանիզմ՝ կազմված փոխկապված, բայց հարաբերաբար ինքնուրույն ենթահամակարգերից: Այսինքն, չնայած տնտեսության բաղադրիչների ինքնուրույնությանը, այդ ամբողջությունը սոցիալ-տնտեսական կարգի ու հաստատությունների միասնական համակարգ է, միասնական իրական ամբողջություն: Այս առումով՝ անհրաժեշտություն է դառնում տնտեսական գործընթացները պայմանավորող սոցիոմշակութային միջավայրի վրա ազդող բոլոր գործոնների վերլուծությունը: Թերևս սրանով է բացատրվում այն, որ գաղափարական հենքը ամրացվում է սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման գործում պետության սոցիալական պատասխանատվության պոզիտիվ առաքելության փաստով:

Ժամանակակից ինստիտուցիոնալիզմն ունի լիբերալ բնույթ, որն, ըստ էության, լիբերալիզմի նոր տեսակ է: Պահպանելով մասնավոր սեփականության, անհատական ազատության և անձեռնմխելիության սկզբունքները, ժամանակակից ինստիտուցիոնալիստները, այնուամենայնիվ, չեն հրաժարվում կառավարվող զարգացման գաղափարից, այսինքն՝ հանդես են գալիս պետության՝ որպես կայացած հաստատության ակտիվ գործունեության օգտին, որի արդյունավետությունը ձեռք է բերվում տնտեսական գործակալների վարքագիծը կարգավորող խիստ իրավական նորմերի միջոցով, որոնք, ի վերջո, ենթադրում են խաղի բոլոր կանոնների պահպանում՝ ի շահ ամբողջ համակարգի գործունեության կայունության: Այս իմաստով՝ կարելի է որոշակի զուգահեռներ անցկացնել ինստիտուցիոնալ տեսության և գերմանական նեոլիբերալ «կարգի տեսության» միջև: Ելակետային մեթոդաբանական տարբեր սկզբունքներով հանդերձ, երկու մոտեցումներն էլ որպես գիտական ուղղություններ, կարևորում են անցումը տնտեսապես արդյունավետ հասարակությանը՝ հիմնված ներքին խթանների առավել ամբողջական կիրառման վրա, ինչը ձեռք է բերվում ինստիտուցիոնալ մեխանիզմի ստեղծման, բավականին խիստ իրավական նորմատիվ շրջանակների սահմանման միջոցով, ընդ որում, խստորեն պահպանվում են տնտեսական ազատության և մասնավոր սեփականության սկզբունքները: Երկու տեսություններն էլ, ձգտելով նվազեցնել տնտեսական կյանքին պետության անմիջական միջամտությունը, հասարակությանն առաջարկում և վերահսկում են տնտեսական խաղի կանոնները՝ բավականին ուժգին ապավինելով պետությանը: Ինչ վերաբերում է կարգի նեոլիբերալ տեսությանը, ապա այն ձևավորվել է Գերմանիայում 1930-ական թվականներին, գերմանական պատմական դպրոցի հիման վրա: Այս տեսության հիմնական սկզբունքները տնտեսական գործընթացների վերլուծության

ժամանակ ենթադրում են իրավա-քաղաքական մոտեցում, շուկայական սկզբունքների կիրառում՝ պետության ակտիվ միջամտության պայմաններում, մասշտաբային սոցիալական բաղադրիչի առկայություն, ժամանակակից մրցակցության հասկացությանը սկզբունքորեն նոր մոտեցում [ոչ թե որպես շուկայական ուժերի տարերային փոխազդեցություն, այլ որպես գիտակցված կառուցողական մեխանիզմ, որի ինստիտուցիոնալ նախադրյալները դրվում են պետության կողմից) և, վերջապես, ուժեղ իրավական պետություն, որն ի վիճակի է իրականացնելու կարգի արդյունավետ քաղաքականություն և պաշտպանելու հասարակությանը հնարավոր կառուցվածքային և իրավական դեֆորմացիաներից:

Այս տեսության էությունը տնտեսական կարգն է, որպես ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատությունների համադրություն, օժտված այնպիսի պարամետրերով, որոնցում «հավասարապես ազատ անհատները ընտրություն են կատարում այլընտրանքային հնարավորությունների միջև և կայացնում համակարգված որոշումներ» [2]: Տնտեսական կարգը գոյություն ունի այն ձևավորվող մասնավոր կարգերի օրգանական միասնության և փոխգործակցության մեջ [մրցակցային, սոցիալական, իրավական և այլն) և իրականացվում է իրեն համապատասխան կարգավորող իրավական-նորմատիվ ենթակառուցվածքի համատեքստում, «վերջինս հանդիսանում է հիմնարար սկզբունքների համադրություն, որոնք հասարակության ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերի և պետության սահմանադրության համաձայն կարգավորում են կոնկրետ տնտեսական գործողությունները» [3]:

Ինչ վերաբերում է կարգին, ապա այն ձևավորվում է պատմական զարգացման ընթացքում էվոլյուցիոն ուղով, սակայն կարող է կազմակերպվել պետության կողմից՝ ձևավորելով կարգի քաղաքականությունը: Այս առումով Վ.Օյքենը նկատել է, որ պետությունն իր վրա չպետք է վերցնի տնտեսական գործընթացների ուղղակի և մշտական կարգավորման կտրվածքով անլուծելի խնդիրներ: «Տնտեսական քաղաքականության ամենակարևոր արվեստը «սահմանափակ թվով կարգերից վերջիններիս գերակշռող ձևի ընտրությունն է»[3], խուսափելով տնտեսական կյանքին պետության միջամտության ուղղակի ձևերից: Նրա կարծիքով, արդյունավետ շուկայական արդյունքների ձեռքբերման գլխավոր պայմանը տնտեսական ազատությունն է, որն իրացվում է կոնկրետ կարգի կամ պետության ակտիվ դերակատարության վրա հիմնված շուկայական տնտեսության պայմաններում, որտեղ շուկայական գործընթացների մասնակիցներց և ոչ մեկը չունի այնպիսի տնտեսական իշխանություն, որ ազդի գների կամ արտադրության ծավալների վրա, այսինքն՝ ձևավորի խաղի նոր կանոններ: Այս իմաստով պետության՝ մրցակցային կարգի կազմակերպման և պահպանման քաղաքականությունն ուղղված է մրցակցության բնույթին չհամապատասխանող գործոն-

ների զսպմանը [տնտեսական իշխանության չարաշահման ցանկացած դրսևորումների սահմանափակում, այդ թվում՝ պետության կողմից), ինչպես նաև այն «ձախողումների» շտկմանը, որոնք ծագում են գործող մրցակցային կարգի պայմաններում: Մրցակցային կարգը, համաձայն օրթոլիբերալ տեսության, հաստատված կարգ է և բխում է ազգային տնտեսության զարգացման պատմականորեն հաստատված միտումներից: «Մենք մրցակցային կարգ չենք հորինում, - գրել է Վ. Օյքենը, - բայց մենք դրա տարրերը դուրս ենք բերում կոնկրետ իրականությունից: Մենք ոչ մի բան չենք ստիպում, բայց օգնում ենք բացահայտել ... մրցակցության առավել կայուն միտումները, որոնք մենք ինքնին գտնում ենք առօրյա կյանքում» [3]:

Ի տարբերություն laissez-faire դասականների, ովքեր գտնում են, որ մրցակցությունը ինքնաբերաբար վերարտադրվում է ազատ շուկայում, գերմանացի օրթոլիբերալները փորձեցին ապացուցել, որ ինքնաբուխ զարգացող շուկայական գործընթացն ուղեկցվում է հաստատությունների ինքնաբուխ ձևավորմամբ, ընդ որում, մասնակիցների միջև համաձայնության ազատությունը պահպանելիս տնտեսական իշխանության դիրքերում կարող են առաջանալ անհամամասնություններ, որոնք կարող են հանգեցնել սահմանափակ մրցակցությամբ դեֆորմացված շուկայական ձևերի ստեղծմանը կամ մրցակցության լիակատար բացակայությանը: Այստեղից էլ՝ շուկայական կառուցվածքների ձևավորման վրա մրցակցությունը երաշխավորող պետական վերահսկողության անհրաժեշտությունը:

Այս տեսության մեջ կարևորվում է նաև սոցիալական կարգը կամ քաղաքականությունը, որը դիտարկվում է ընդհանուր տնտեսական կարգի ձևավորման համատեքստում որպես նրա կենսունակության և կայունության երկարաժամկետ քաղաքական երաշխավոր: «Սոցիալական քաղաքականության խնդիրները, - գրել է Օյքենը, - պետք է դառնան տնտեսական կարգի կատեգորիաներով ընդհանուր մտածողության որոշիչ գործոն: Գոյություն չունեն տնտեսական քաղաքականության միջոցներ, որոնք միաժամանակ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն հանգեցնի սոցիալական հետևանքների և չեն ունենա սոցիալական նշանակություն: Յուրաքանչյուրը, ով ցանկանում է ներկայացնել սոցիալական շահեր, պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնի ընդհանուր կարգի ձևավորմանը» [3]:

Ժամանակակից մակրոտնտեսական պարադիգմի ձևավորումը ենթադրում է ավելի ճկուն և էկլեկտիկ հայեցակարգի ստեղծում, որը շուկայական անհավասարակշռությունների վերացմանն ու ճշգրտմանը զուգահեռ՝ նեղշուկայական տեսլականից դուրս կներառի հավասարակշռությունների լուծումներ: Խոսքը վերաբերում է գործող սոցիալ-տնտեսական համակարգերի տարբեր օղակ-

ների գործունեությունը կարգավորող նորմատիվաինֆորմացիոն բնույթի հատուկ ինստիտուցիոնալ ինֆրակառուցվածքի ձևավորմանը: Այսինքն, առաջնային է դառնում մակրոմակարդակում իրավական նորմերի կատարաելագործման միջոցով փոխգործող տնտեսական գործակալների փոխհամաձայնությունն - ապահովող կոորդինացիոն բաղադրիչը, մասնավորապես՝ աուդիտի, հաշվետվությունների միասնական համակարգի, սերտիֆիկացման ու ստանդարտացման և այլ ինստիտուցիոնալ գործիքները, որոնք, ի վերջո, գլոբալ անորոշությունների պայմաններում տրանսակցիաներ կատարելիս նպաստում են հնարավոր ռիսկերի նվազեցմանը: Հարկ է նկատել, որ որոշ տնտեսագետների շրջանում արդեն 1990-ականներին իշխում էր այն մոտեցումը, թե տեղի է ունենում ազգային տնտեսությունների դերի դեվալվացիա կամ տնտեսական գործընթացների վրա իրական ազդեցության կորուստ: Ինչ խոսք, գլոբալացումը հանգեցնում է ազգային պետությունների սուվերենության նեղացմանը, սակայն, հետագա գործընթացները ցույց տվեցին, որ գլոբալացումն ի վերջո ենթադրում է ձախողումներ, որոնք անհնար է վերացնել առանց ազգային պետությունների օգնության: Այստեղ գործ ունենք ազգային պետությունների ներսում գործող ֆինանսական ինստիտուտների գործունեության նկատմամբ ուժեղ հսկողության, հարկային կարգավորումների և այլ հիմնախնդիրների հետ, որոնք ենթակա են կարգավորման պետական իշխանության ազգային մարմինների կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Козлова К.Б.** Институционализм в американской политэкономии. Идейно-теоретические основы либерального реформизма.- М.: Наука, 1987.-214 с.
2. **Ойкен В.** Основы национальной экономики.- М.: Экономика, 1996.- 420 с.
3. **Ойкен В.** Основные принципы экономической политики.- М.: Прогресс, 1995.- 493 с.

М.К. АГАЯН

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЙ ПОДХОД К ОБОСНОВАНИЮ ЭКОНОМИЧЕСКОЙ РОЛИ ГОСУДАРСТВА

Анализ всех факторов, влияющих на социокультурную среду, обуславливающих экономические процессы, правовой и политический подход к анализу экономических процессов и применение рыночных принципов имеют важное значение. Защищая принципы частной собственности, свободы личности и неприкосновенности, государство в силу институциональных инструментов в условиях глобальной неопределенности призвано защищать общество от возможных структурных и правовых деформаций.

Ключевые слова: институционализм, теория порядка, экономическая свобода, монополия, соревнование, государственное вмешательство, социальная ответственность, управляемое развитие, институциональная инфраструктура.

M.K. AGHAYAN

AN INSTITUTIONAL APPROACH TO SUBSTANTIATING THE ECONOMIC ROLE OF THE STATE

The analysis of all the factors affecting the socio-cultural environment conditioning the economic processes, the legal-political approach in the analysis of economic processes and the application of market principles are very important. By safeguarding the principles of private property, individual liberty, and immunity, the state, through institutional instruments, should protect the public from possible structural and legal distortions.

***Keywords**:* institutionalism, "theory of order", economic freedom, monopoly, competition, state intervention, social responsibility, managed development, institutional infrastructure.

ՀՏԴ 329[479.25):336.563:94[4)″1914/19″

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ/1908-14ԹԹ./

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպական կառույցները Եղեռնի նախօրեին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծել արևմտահայության շրջանում նրանց ներկայացվածությունն ու գործունեության արդյունավետությունը:

Առանցքային բառեր. Կենտրոնական կոմիտե, մասնաճյուղ,Վարիչ մարմին, կուսակցության անդամ, կազմակերպական մարմիններ:

Աշխատանքում հարցը դիտարկվում է տեսական նոր մոտեցմամբ՝ կատարելով հիշյալ ժամանակաշրջանում հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ընթացքը ստուգող հետազոտություններ: Հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպական կառույցների /1908-1914 թթ./ ուսումնասիրության նպատակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության տարածքում հայ կուսակցությունների կազմակերպական կառուցվածքի, նրանց ներկայացվածության իրական պատկերի և հայերի ինքնապաշտպանության ուղղությամբ ընդունված որոշումների կատարման ընթացքի հետազոտությունն ու ներկայացումն է:

Հիշյալ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում գործում էին երեք կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Սահմանադիր ռամկավար կուսակցությունը [1908 թ. Ալեքսանդրիայում վերակազմյալ հնչակյանների և արմենական կուսակցության միավորմամբ ձևավորված) [1]: